ԿԱՐԾԻՔ

ԱԲՈՒ ԶԱԻԴ ԱԼԻ ՄՈՒՍԱՅԻ «ՆԵՐՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՍՐԱՅԵԼԱ-ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հրապարակային պաշտպանության ներկայացված պաղեստինցի Աբու Զահիդ Ալի Մուսայի ատենախոսությունը նվիրված է պաղեստինյան չափազանց զգայուն և փխրուն հիմնախնդրին, որի արմատները ձգվում են դեպի XIX դարավերջերը: Տասնամյակներ շարունակ խնդրո առարկա թեման և նրա հետ սերտորեն աղերսվող զանազան հարցերը գտնվել են համաշխարհային գիտական տարբեր կենտրոնների, ռազմա-քաղաքական գործիչների, արևելագետների, միջազգայնագետների և արաբագետների սնեռուն ուշադրության կենտրոնում: Եվ չնայած հիմնախնդրի մասին հրապարակի վրա առկա բազմալեզու հարուստ գրականությանը, այդուհանդերձ, թեմայի արդիականության, կարևորության և գիտական նշանակության նկատմամբ բուռն կերպով շարունակվում են տարբեր մասնագետների հետաքրքրությունները:

Ինչպես հայտնի է, երկրորդ աշխարհամարտը հիմնովին փոխեց նաև Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական իրադրությունը, ինչի արդյունքում 1948 թ. իրականություն դարձավ հրեաների դարավոր երազանքը՝ Իսրայել պետության ստեղծումը: Արևմուտքի, ԱՄՆ-ի և միջազգային սիոնիստական հրեական կազմակերպությունների եռանդուն ջանքերով աշխարհի քարտեզի վրա ի հայտ եկած այդ պետության հիմնումը շրջադարձային իրադարձություն եղավ Մերձավոր Արևելքի նորագույն պատմության մեջ: Դրանով տարածաշրջանը վերածվեց միջազգային քաղաքականության բարդ հանգույցի՝ այն կանգնեցնելով նոր վտանգների և սպառնալիքների առջև:

Իսրայել պետության հռչակմամբ Մերձավոր Արևելքում սկիզբ դրվեց տևական և արյունալի մի հակամարտության, որը անցնելով պատմական տարբեր փուլեր, գնալով ավելի է ահագնանում և անլուծելի

դառնում, հատկապես պաղեստինցի արաբների համար, որոնց թիվն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կազմում էր Պաղեստինի 700 հազարանոց բնակչության գրեթե 90 տոկոսը: Այս թվերն, անշուշտ, փոփոխվեցին հետագա տասնամյակներին հրեաների՝ Իսրայել կազմակերպված ներգաղթի և պաղեստինցիների արտագաղթերի հետևանքով:

Պաղեստինում արաբ բնակչության նկատմամբ անարդար վերաբերմունքը և նրա շահերի անտեսումը հանգեցրեցին լայնամասշտաբ պատերազմների, որոնք աղետալի հետևանքներ ունեցան նախ և առաջ պաղեստինցիների, ապա և՝ հատկապես հարևան Սիրիայի, Հորդանանի և Եգիպտոսի համար:

Ահա, այս առումով չափազանց ուշագրավ է պաղեստինցի հետազոտող Աբու Զահիդ Ալի Մուսայի ընտրած թեման, որի արդիականությունը պայմանավորված է պաղեստինյան հիմնախնդրի կարևորությամբ, և որից էլ կախված է, մեր խորին համոզմամբ, մերձավորարևելյան տարածաշրջանի ապագան, նրա անվտանգությունն ու կայունությունը:

Նյութի խոր իմացության և վերլուծության շնորհիվ ատենախոսին հաջողվել է նորովի լուսաբանել ներպաղեստինյան զարգացումները, ինչը նպաստել է նրա առջև դրված նպատակների և խնդիրների իրագործմանը: Այդ առումով էլ աշխատությունը ձեռք է բերում ոչ միայն գիտական, այլև՝ կիրառական և քաղաքական կարևոր նշանակություն:

Ատենախոսությունն իր բովանդակությամբ և քննարկվող հիմնախնդիրների բազմազանության տեսանկյունից նորույթ է հայ արևելագիտության մեջ, որտեղ նկատելի են ատենախոսի ինքնուրույն գիտական հետազոտություն կատարելու կարողությունները:

Ներպաղեստինյան քննարկումներն ու հակասությունները իսրայելա-պաղեստինյան դիսկուրսի համատեքստում համապարփակ ներկայացնելու համար, հեղինակը օգտագործել է գլխավորաբար արաբերեն և անգլերեն մենագրություններն ու ինտերնետային կայքէջերի

նյութերը, ինչպես նաև խնդրո առարկա թեմայի վերաբերյալ բուն պաղեստինցի քաղաքական և հասարակական գործիչների մեկնաբանություններն ու վերլուծությունները, ինչով էլ պայմանավորված են աշխատության կառուցվածքը և նրանում արծարծվող խնդիրները:

Աբու Զահիդ Ալի Մուսային ընդհանուր առմամբ հաջողվել է գիտական պատշաճ մակարդակով լուսաբանել արաբա-իսրայելական հակամարտության առանցքային խնդիր հանդիսացող ներպաղեստինյան քաղաքական դիսկուրսը, պաղեստինյան տարբեր խմբավորումների, հատկապես քաղաքական կազմակերպությունների տարաձայնությունները, առճակատումները, որոնք բացասաբար են անդրադարձել թե՛ պաղեստինյան խնդրի կարգավորմանն ուղղված ջանքերի, և թե՛ տարածաշրջանի համընդհանուր անվտանգության և խաղաղ գոյակցության վրա:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից և օգտագործված գրականության ցանկից:

Չնայած ատենախոսության ժամանակագրական շրջանակներն ընդգրկում են 1993-ից 2017 թվականները, այդուհանդերձ, աշխատության առաջին գլխում («Պաղեստինի ազատագրման կազմակերպության» և «Պաղեստինի ազգային ազատագրական շարժման ստեղծումն ու զարգացումը. հայացք ներսից») հեղինակը ներկայացնում է պաղեստինյան հիմնախնդրի նախապատմությունը, քաղաքական կազմակերպությունների ձևավորումը, ինչպես նաև Պաղեստինի ազատագրման կազմակերպության ստեղծման դրդապատճառները, նրա գործունեությունը և այլն:

Երկրորդ գլխում («Համաս շարժումը. ստեղծումն ու գաղափարախոսությունը, Համաս և Ֆաթհ շարժումների միջև բախումը») ատենախոսը ընդհանուր գծերով անդրադառնում է Համասի՝ իսլամական դիմակայության շարժման ստեղծմանը, այդ կազմակերպության դիրքորոշմանը՝ ՊԱԿ-ի, 1993 թ. Օսլոյի պայմանագրի, խաղաղության գործընթացի և այլևայլ խնդիրների նկատմամբ:

Աշխատության երրորդ գլխում («Պաղեստինյան հասարակական քաղաքական կարծիքը ներպաղեստինյան խնդիրների և Պաղեստին պետության ապագայի վերաբերյալ») հեղինակը լուսաբանում է Համասի և Ֆաթհի հակամարտությունները, այդ երկու շարժումների և պաղեստինյան խմբավորումների քաղաքական տարաձայնությունների պատճառները: Այս կապակցությամբ էլ Աբու Զահիդ Ալի Մուսան անդրադարձել է, ինչպես նշվեց, պաղեստինցի արաբ հասարակական-քաղաքական գործիչների կարծիքներին, որոնք վերաբերում են պաղեստինցիների պառակտման պատճառներին, ապա վերլուծում նրանց դիրքորոշումները խաղաղության համաձայնագրի և Պաղեստինի ապագայի վերաբերյալ:

Աշխատության չորրորդ գլխում («Երուսաղեմի հիմնախնդիրն ու դրա շուրջ միջազգային, արաբական և ներպաղեստինյան դիսկուրսը») հեղինակը անդրադառնում է Երուսաղեմի միջազգային կարգավիճակին, նրան նվիրված տարբեր քննարկումներին, ինչպես նաև ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի Երուսաղեմը Իսրայելի մայրաքաղաք հռչակելու և ԱՄՆ դեսպանությունը սուրբ այդ քաղաքը տեղափոխելու որոշումներին, դրանց իսրայելական, արաբա-իսլամական և միջազգային արձականքներին և այլն:

Եզրակացությունում ատենախոսը ամփոփում է աշխատությունում քննարկվող հիմնական խնդիրների գնահատականները, եզրակացությունները, անդրադառնում ներպաղեստինյան երկխոսությանը, պաղեստինյան տարբեր խմբավորումների տարակարծություններին և այլն:

Ամփոփելով նշենք, որ փաստական նյութերի համադրումը և վերլուծությունը հեղինակին հնարավորություն են տվել հանգամանորեն քննության ենթարկել պաղեստինյան հիմնահարցը, ներպաղեստինյան տարբեր ուժերի տեսլականները, հակասություններն ու բախումները, որոնք կամա թ՛ե ակամա հավելյալ բարդություններ են հաղորդել հիմնախնդրին, պառակտելով պաղեստինյան հասարակությունը:

Աբու Զահիդ Ալի Մուսայի եզրակացությունները հիմնավոր են և համոզիչ: Հրատարակված սեղմագիրն ամբողջությամբ արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Պետք է նշել, որ ինչպես ցանկացած աշխատանք, սույն ատենախոսությունը ևս զերծ չէ թերություններից.

-Նախ հայերեն տեքստում տեղ են գտել լեզվական որոշ սխալներ, ոչ տեղին կրկնություններ և մտքային ոչ ճիշտ ու երբեմն անհասկանալի ձևակերպումներ: Աշխատությունը լուրջ խմբագրման կարիք ունի:

-Ատենախոսության գլուխների և ենթագլուխների խորագրերը հիմնականում երկարաշունչ են, պետք է կրճատել և ավելի պարզ ու հստակ դարձնել:

-Ատենախոսության տեքստը ծանրաբեռնված է պաղեստինյան հասարակական- քաղաքական բազմաթիվ գործիչների մեկնաբանություններով և տեսակետներով: Կառաջարկեինք ատենախոսության վերջում տալ վերոնշյալ գործիչների կարծիքների ընդարձակ հավելվածը:

-Կարծում ենք, որ արաբական աշխարհում 2010 թվականի վերջերից սկիզբ առած, այսպես կոչված, «Արաբական գարնան» ալիքը առավել կամ նվազ չափով ազդեցություն ունեցավ ոչ միայն համաարաբական խնդիրների և զարգացումների, այլև՝ բուն պաղեստինյան հիմնախնդրի և ներպաղեստինյան կյանքի վրա:

Ցանկալի է ապագայում աշխատությունը հրատարակելիս հեղինակի կողմից հաշվի առնվեին այդ խնդիրները, հատկապես սիրիական ճգնաժամի ազդեցությունը ներպաղեստինյան երկխոսության և տարբեր խմբավորումների դիրքորոշումների փոփոխության վրա:

-Կարծում ենք աշխատանքը մեծապես կշահեր, եթե ատենախոսը օգտագործեր ոչ միայն պաղեստինյան արխիվների նյութերը, այլև՝ հրապարակի վրա եղած պաղեստինյան հիմնախնդրի և նրա հետ սերտորեն փոխկապակցված այլևայլ հարցերի մասին ռուս, պարսիկ,

եվրոպացի, այդ թվում նաև՝ հայ արևելագետների ուսումնասիրությունները (օրինակ՝ Ն. Հովհաննիսյանի, Ռ. Կարապետյանի են):

Այս և այլ կարգի դիտողությունները ստվեր չեն գցում Աբու Զահիդ Ալի Մուսային գիտական արժեքավոր ատենախոսության վրա: Անառարկելի է, որ սույն աշխատությունը մեզանում լինելով գիտական առաջին փորձը, լույս է սփռում պաղեստինյան և ներպաղեստինյան թեմայի շատ ասպեկտների վրա:

Ելնելով վերոնշյալից՝ միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի մասնագիտական խորհրդի առջև՝ Աբու Զահիդ Ալի Մուսային շնորհելու իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը, ինչին նա արժանի է:

Արշակ Փոլադյան
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Թունիսում և Մարոկկոյում
ՀՀ դեսպան

Երևան 19/06/2022